



11-ը մայիսի 2010թ.

Մամուլի հաղորդագրություն

Լրացնելով Թանգարանների միջազգային օրվա առթիվ կազմակերպվող բազմաթիվ միջոցառումները՝ Ֆրանսիայի մշակույթի նախարարությունը 2005թ.-ից հանդես եկավ «Թանգարանների գիշեր» նախաձեռնությամբ, որն ընթանում է Եվրոպայի խորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո:

«Թանգարանների եվրոպական գիշեր»-2010-ի առթիվ հանդես գալով ողջույնի ուղերձով՝ Ֆրանսիայի մշակույթի նախարար Ֆրեդերիկ Միտտերրանը նշել է. «Տոնական և հյուրընկալ իրադարձություն, որը հնարավոր է դարձնում կախարդական բացահայտումներ անել՝ գիշերային հմայք ստացած թանգարաններ այցելելու ընթացքում... Այս նախաձեռնությունը նպաստում է հյուսել նոր կապեր՝ եվրոպական մայրցամաքի թանգարանների միջև, այն հրավիրում է ողջ հասարակությանը բացահայտելու ամենամոտ մշակութային միջնորդների՝ թանգարանների անսպառ հարստությունները.. Ջերմորեն շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր հնարավոր են դարձնում այս բացառիկ իրադարձությունը և մասնակիցներից յուրաքանչյուրին մաղթում եմ հրաշալի թանգարանային գիշեր՝ լի արվեստի նկատմամբ սիրով»:

Թանգարանների մշակութային և հասարակական դերը նրանց դարձնում է հասարակական ներդաշնակության խրախուսողներ և իրականացնողներ: Թանգարանները այն իդեալական հարթակներն են, որոնք իրականացնում են միջմշակութային հաղորդակցություն և մշակույթների փոխանակություն: ԻԿՕՍ-ն առաջարկել է 2010-ին գործողություններ իրականացնել **«Թանգարանները հանուն սոցիալական ներդաշնակության»** խորագրի շրջանակում:

Այս համատեքստում «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը՝ միանալով «Թանգարանների եվրոպական գիշեր» համաեվրոպական ձեռնարկին, 2010թ. մայիսի 15-ի շաբաթ օրը կհյուրընկալի Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների խմբերին՝ հույներ ու ասորիներ, հրեաներ ու լեհեր, ուկրաինացիներ ու բելառուսներ, վրացիներ ու գերմանացիներ, եգիպտացիներ ու քրդեր: Հնավայրին, թանգարանի մշտական ցուցադրությանը և «Ուրարտուից Երևանի զարեջուր» ժամանակավոր ցուցահանդեսին ծանոթանալուց հետո մասնակիցները կհավաքվեն թանգարանի ներքին բակում՝ հաճելի և անկաշկանդ մթնոլորտում ունկնդրելու ազգային փոքրամասնությունների կատարողական խմբերի ելույթները, թանգարանի հարկի տակ միասին անցկացնելու երեկոն և ավելի լավ ճանաչելու միմյանց: Ասորական «Նինվե», քրդական «Ժիան», ուկրաինական «Չվինոչոկ», հայկական «Ակունք», վրացական «Իվերիա» համույթները կցուցադրեն մշակույթների բազմազանությունը՝ խորհրդանշելով հարգանքն ու համերաշխությունը յուրաքանչյուրի մշակույթի նկատմամբ:

Ընդառաջ գնալով 2010-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից **Մշակույթների մերձեցման միջազգային տարի** հայտարարելու որոշմանը՝ միջոցառումը կկրի «**ՃԱՆԱԶԵՆՔ ՉՄԻՄՅԱՆՄ**» խորագիրը և կսկսվի Թանգարանների գիշերվա մեկնարկի հետ՝ մայիսի 15-ին ժամը 18:00-ին:

Միջոցառման իրականացմանն աջակցել են «ՄԱՊ» ՓԲԸ-ն, «Նուշիկյան» ասոցիացիան և «ԻԿՕՍՕՍ/Հայաստան» հասարակական կազմակերպությունը:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան